ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2015-6-1-Ա

ք. Երևան 23.12.2015թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2015 թվականի դեկտեմբերի 23-ի նիստում քննարկեց 2015 թվականի դեկտեմբերի 1-ին արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված՝ Էփլ Ինք. ընկերության (1 Infinite Loop Cupertino, CA 95014) բողոքը «IWATCH» (IR1191200G) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի եւ ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու եւ քննարկելու» կարգի 107–րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, եւ դրանով մակնշվող ապրանքների եւ (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված «IWATCH» ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «SWATCH», «ISWATCH», «ESWATCH» (SWATCH AG (SWATCH SA) (SWATCH LTD) Jakob-Stämpfli-Strasse 94 CH-2502 Biel/Bienne (CH) IR 962366, 962367, 469696, 473651, 496846, 506123, 508191, 525650) ապրանքային նշաններին: Կարգի 111–119-րդ կետերի համաձայն համեմատվող նշաններն ունեն ձայնային նմանություն, այն է՝ վերոհիշյալ երկու ապրանքային նշաններում էլ առկա է «WATCH» (ժամացույց) համընկնող բառը, որն ունի առանձին իմաստ, եւ որի վրա էլ ընկնում է տրամաբանական շեշտադրումը:

Տեսնելով դրանցից մեկը, միջին սպառողի մոտ կարող է պատկերացում առաջանալ մտապատկերված մեկ այլ նշանի մասին, որի հետ ինքն արդեն առնչվել է:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մասնակիորեն բավարարելու և միայն 9-րդ դասի «ռադիո» ապրանքի համար մերժելու վերաբերյալ: Քանի որ հակադրված շփոթելու աստիճան նման միջազգային գրանցման հիման վրա ՀՀ տարածքում պահպանվող IR508191 ապրանքային նշանի ապրանքների ցանկում առկա է «ռադիո սարքեր» ապրանքը, հետևաբար «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի եւ 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն ներկայացված ապրանքային նշանը չի կարող գրանցվել վերը նշված ապրանքի համար:

Բողոքարկողը արտահայտեց իր տեսակետը այն մասին, որ ցանկալի է ապրանքային նշանը գրանցվի 9-րդ դասում նշված բոլոր ապրանքների համար:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Ալեքսանդր Նահապետյանի կողմից ներկայացված «IWATCH» (IR1191200G) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մասնակիորեն բավարարել, փորձաքննության որոշումն մասնակիորեն չեղյալ ճանաչել և ապրանքային նշանին իրավական պահպանություն տալ 9-րդ դասում նշված բոլոր ապրանքների համար, բացառությամբ «ռադիո» ապրանքի:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ